ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿՈՒՂԱՐԿՎԵՆ ԲԱՆԱԳՆԱՑՆԵՐ

Հելսինկիի գործընթացի մասնակից երկրների արտաքին գործերի նախարարների խորհուրդը Պրահայում ավարտված նստաշրջանում որոշում ընդունեց արագորեն Լեռնային Ղարաբաղ ուղարկել Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցության բանագնացություն: Այդ առաջարկությամբ հանդես էր եկել Մեծ Բրիտանիայի պատվիրակությունը:

Բանագնացությունը պետք է հայադրբեջանական բախման շրջան մեկնի մոտ շաբաթներս: Նրա ժողոված տվյալների հիման վրա հաշվետվություն է կազմվելու, որը կհանձնվի ավագ պաշտոնատար անձանց կոմիտեի քննարկմանը: Կոմիտեն, իր հերթին, պետք է եզրակացություն տա, թե Լեռնային Ղարաբաղում խախտվո՞ւմ են, թե ոչ, Եվրախորհրդակցության պարտավորությունները, որ հինգշաբթի Պրահայում ստանձնել են Հայաստանը և Ադրբեջանը: